ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ
Խնկոյան համայնք, փողոց 1 թիվ 19
էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

☎ 093476682

«27» դեկտեմբերի 2016թ.

N 121

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ պարոն
Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ եմ ներկայացնում Խնկոյան համայնքի ավագանու 21.12.2016թ. N 46, N 47-Ա և N 48-Ն որոշումները:

Առդիր՝ 21 թերթ:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար Վ. Համբարձումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ. Խնկոյան 1 փողոց 19 շենք
հեռ. 093476682
էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<21>> դեկտեմբերի 2016 թվականի N 46

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, Խնկոյան համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել Խնկոյան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Խնկոյան համայնքի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱԿՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ
2. ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 42-Ն «ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Ավագյան Վարդուհի Արամայիսի			
Հարությունյան Շիրակ Աղասու			
Ղազարյան Բագրատ Միշայի			
Մանուկյան Սևակ Վազգենի			

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ. Խնկոյան 1 փողոց 19 շենք
հեռ. 093476682
էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» դեկտեմբերի 2016 թվականի N 47- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱԿՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 15.12.2016 թվականի թիվ 101/113,3/5963-16 գրությունը համայնքի ավագանին

որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2016 թվականի 1-ին եռամսյակում Խնկոյան համայնքապետարանում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:

3. Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Ավագյան Վարդուհի Արամայիսի			
Հարությունյան Շիրակ Աղասու			
Ղազարյան Բագրատ Միշայի			
Մանուկյան Սևակ Վազգենի			

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ. Խնկոյան 1 փողոց 19 շենք
հեռ. 093476682
էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» դեկտեմբերի 2016 թվականի N 48-Ն

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 42-Ն «ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ է.

1. Խնկոյան համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 24-ի թիվ 42-Ն «Խնկոյան համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված Խնկոյան համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի մեջ ավելացնել ծրագրի անձնագիր 1 «Միջհամայնքային ճանապարհների հարթեցման աշխատանքներ», ծրագրի անձնագիր 2 «Եկեղեցու վերակառուցում», ծրագրի անձնագիր 3 «Խմելու ջրի ներքին հին ցանցի վերանորոգում», ծրագրի անձնագիր 4 ««Ներքին ջուր» կոչվող գետակի հունի մաքրում» ծրագրերի անձնագրերը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ավագյան Վարդուհի Արամայիսի			
Հարությունյան Շիրակ Աղասու			
Ղազարյան Բագրատ Միշայի			
Մանուկյան Սևակ Վազգենի			

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԽՆԿՈՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 21.12.2016թ. N 48-Ն որոշմամբ
նիստի ամսաթիվը

Խ Ն Կ Ո Յ Ա Ն 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք .....
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն .....
   2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն .....
   2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը .....
   2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը .....
   2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները .....
   2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .....
   2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .....
   3.1. Համայնքի զարգացման տեսլական .....
   3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ .....
4. ՀՀԶԾ ֆինանսավորում .....
5. ՀՀԶԾ մոնիթորինգ .....

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ
Ձեզ եմ ներկայացնում Խնկոյան համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրիընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):
Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքիտեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վելուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:
Համայնքի հիմնական պրոբլեմներն են՝ Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատպայմաններում: Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝
ա/ հաճախակի են լինում երաշտի, կարկտահարության տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,
բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է գյուղմթերքներից,
գ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:
Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի աշխատողները և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Խնկոյան համայնքը գտնվում է մարզկենտրոնից 50 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Համայնքի տարածքը կազմում է 1196,38 հեկտար: Համայնքն ունի աշխարհագրական ոչ այնքան բարենպաստ դիրք, ծովի մակարդակից բարձր է 1890մ, չկան անտառածածկ տարածքներ, ռելիեֆը լեռնային է: Բուսականությունը՝ լեռնային: Համայնքի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում: Ձմեռը ցուրտ է, կայուն և երկարատև ձյան ծածկույթն սկսվում է նոյեմբերի վերջից և վերջանում ապրիլի 2-րդ տասնօրյակում: Գարունը երկարատև է ու ցուրտ: Ցրտահարությունները միջին տվյալներով վերջանում են մայիսի 2-րդ կեսից: Ամառը կարճէ, զով ու չոր: Աշունը սառն է, առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած ու տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխական է: Աշնանային ցրտահարություններն սկսվում են սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին: Հաճախ են լինում երաշտի տարիներ, որից տուժում են գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիները: Խորհրդային տարիներին գյուղացիներն զբաղվում էին անասնաբուծությամբ, դաշտավարությամբ: Համայնքն ունի հիմնական դպրոց, բուժկետ, մշակույթի տուն: Խնկոյան համայնքը հիմնադրվել է 1829 թվականին արտագաղթի արդյունքում: Արևմտյան հայաստանից Բասենի Ալվար գյուղից: Գյուղը միայն բնակեցված է հայերով: Համայնքի բնակչության 80%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է գյուղատնտեսական մթերքներից:

Համայնքի բնակչության առկա թիվը՝ 410,

այդ թվում՝

0-1 տարեկան – 8

1-2 տարեկան-15

3-4 տարեկան-17

5-6 տարեկան-14

7-10 տարեկան-21

11-14 տարեկան-15

15-17 տարեկան-16

18-22 տարեկան-34

23-45 տարեկան-123

46-62 տարեկան-100

63 և ավելի – 47

Բնակչությանսոցիալականկազմը՝

այդթվում՝

թոշակառուներ –21

միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ – 8

հայրենական պատերազմի մասնակիցներ- 1

հաշմանդամներ – 10

աշխատանք ունեցողներ – 20

գյուղատնտեսական ինքնազբաղվածություն-210

գործազուրկներ –78

ընտանիքների (ծխերի) թիվը-210

փախստականներ-0

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 8729.2 հազար դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 1701,4 հազար դրամ(19,5%),
- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	55,0 հա	605 տ
ցորեն	185,0 հա	592 տ
գարի	55,0 հա	176 տ
Բանջարանոցային մշակաբույսեր	1,0 հա	3 տ
Կերային մշակաբույսեր	120 հա	648 տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	362
Այդ թվում կովեր	188
Ձիեր	6
Ոչխարներ և այծեր	343
խոզեր	13
թռչուններ	390
Այդ թվում հավեր	390
մեղվաընտանիքներ	93

- Համայնքում գործում է հիմնական դպրոց, որտեղ սովորում են 15 աշակերտ:

Դպրոցն ունի 20 աշխատող:

- Համայնքում գործում է մեկ բուժկետ, որն ունի 1 մահճակալ սպասարկում է Խնկոյան համայնքի 410 բնակիչների:

Բուժկետում աշխատում է 1 աշխատող:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 46 ընտանիքներ,

- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 80 %:
- Խնկոյա համայնքը զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ չունի:

2.3. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	8729.2 հազար	8749.2 հազար	8738.4 հազար	8749,6 հազար	8750.2 հազար
Ա	Հարկային եկամուտներ	1701.4 հազար	1711.4 հազար	1710.6 հազար	1716.8 հազար	1722.4 հազար
1	Հողի հարկ	1296 հազար	1296 հազար	1296 հազար	1296 հազար	1296 հազար
2	Գույքահարկ	355.4 հազար	365.4 հազար	364.6 հազար	370.8 հազար	376.4 հազար
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	50.0 հազ	50.0 հազ	50.0 հազ	50.0 հազ	50.0 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ					
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	6227.8 հազար	6237.8 հազար	6227.8 հազար	6232.8 հազար	6227.8 հազար
Ե	Եկամուտներ կապիտալ գործառություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

2.4. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Խնկոյան համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝
Համայնքի բնակչության 80%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,
. ֆինանսի բացակայությունը
.Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝

.Ֆինանսական սղությունը,

2) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

.մշակութային կյանքի պասիվությունը,.

3) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

.գործազրկությունը,

,.խմելու ջրի ջրավազանի վերանորոգման անհրաժեշտությունը և ներքին ցանցի անմխիթար վիճակը,

4) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

5) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ .համայնքաբնակների աղքատությունը,

6) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատման գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,

.միջոցների սղությունը:

7) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.միջհամայնքային, ներհամայնքային և դաշտահիջյան ճանապարհների քայքայված վիճակը:

8) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.սեյսմիկ գոտում գտնվելը:

9) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ոռոգման ջրագծի քայքայված վիճակը,

.ոռոգման ցանցի բացակայությունը:

10) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

11) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝
ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է գյուղմթերքներից,
գ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր ձեռքբերելու,
դ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,
ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,
զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները
է/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների: Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	*Համայնքի թույլ կողմեր*
.Բանիմաց աշխատուժի առկայություն .հիմնական դպրոցի առկայություն. Բուժկետի առկայություն .Բերրի հողերի առկայություն .Հեռահաղորդակցության առկայություն .Գազաֆիկացման առկայություն . Բարենպաստ աշխարհագրական դիրքը . Սեփականաշնորհված հողաբաժնի չափը .Ոռոգման ներհամայնքային համակարգի առկայությունը . Գիշերային լուսավորության առկայությունը . Գերեզմանոցը գտնվում է ցանկապատված վիճակում .Կուլտուրայի տունը և դպրոցը կապիտալ վերանորոգված է	. Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ .Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ .Ֆինանսական ռեսուրսների բացակայություն .Ծնելիության նվազում .միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ .Աշխատատեղերի պակաս . Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը . Մշակույթի տան գույքի բացակայությունը . Հոգևոր մշակույթի արժեքների բացակայությունը՝ . եկեղեցու ավերված վիճակը
Հնարավորություններ	*Սպառնալիքներ*
.Ոռոգման ջրի պաշարի առկայություն .Խմելու ջրի պաշարի առկայություն .Բերրի հողերի առկայություն	.Տարերային աղետների վտանգ .Գյուղ. մթերքների գների նվազում .Խիստ կլիմա /ցրտահարություն/ . Հարկային և ոչ հարկային եկամուտների գանձման դժվարությունները

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնքև մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 1%-ով աճի
- Եկեղեցու վերանորոգում
- Գյուղատնտեսության և անասնապահության շահութաբերության բարձրացում
- Հնարավորության սահմաններում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի իրականացում

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1) Համայնքի գույքը կառավարել:
2) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
3) Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
4) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
5) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
6) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
7) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
8) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:

ԾՐԱԳԻՐ 1

Խնկոյան համայնքում մարդկան տեղաշարժի և տրանսպորտի բոլոր միջոցների բավարար երթևեկության պայմաններ բոլոր եղանակների համար ապահովվելու նպատակով կիրականացվի **<<Միջհամայնքային ճանապարհների հարթեցման աշխատանքներ»** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ մարդկան տեղաշարժի և տրանսպորտային բոլոր միջոցների բավարար երթևեկության ապահովումը, համայնքաբնակների եկամուտների աճի ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Հարթեցված գլխավոր փողոցներ

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել անհրաժեշտ քանակի խիճ և կավի զանգված:

1.2. Ձեռք բերել անհրաժեշտ քանակի դիզ. վառելանյութ:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Ապահովվել անհրաժեշտ շինարարական տեխնիկայի ծառայություն:

2.2. Ճանապարհահարթեցման աշխատանքների կազմակերպում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Խնկոյան համայնքի բոլոր 410 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Խնկոյան համայնքի գլխավոր ճանապարհները դարձնել անցանելի բոլոր տրանսպորտային միջոցների համար: Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում: Համայնքի բնակիչները ոչ միշտ են կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի: Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծը և բյուջեն: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 500000 դրամ

Կապիտալ ծախսեր՝ 1 մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 1500000 դրամ

ԾՐԱԳԻՐ 2

Խնկոյան համայնքում հոգևոր և մշակութային արժեքները զարգացնելու նպատակով կիրականացվի **«Եկեղեցու վերակառուցում»** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ վերականգնել եկեղեցու ավերակները: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Եկեղեցու ավերակների վերականգնում:

2. Հոգևոր կյանքի, մշակույթի և զբոսաշրջության զարգացում:

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ֆինանսական հանգանակության կազմակերպում և դոնոր կազմակերպությունների ներգրավում:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Շինարարական կազմակերպության ընտրում:

2.2. Շինթույլտվության տրամադրում:

2.3. Շինարարական աշխատանքների վերահսկում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 4,5%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Խնկոյան համայնքի բոլոր 410 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Ներկայումս համայնքում եկեղեցի չկա: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կստանան հոգևոր բավարարվածություն:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 1 մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 10 մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 11 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

Խնկոյան համայնքում որակյալ և մշտական խմելու ջրի ապահովման նպատակով կիրականացվի **«Խմելու ջրի ներքին հին ցանցի վերանորոգում»** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներին որակյալ խմելու ջրի ապահովվումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Մետաղապլաստյա խողովակների և կցոնների ձեռք բերում:

1.2. Հողային աշխատանքների իրականացում:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Հին ցանցի ապամոնտաժում:

2.2. Խողովակաշրի մոնտաժում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Խնկոյան համայնքի 20 ընտանիքները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, մրցույթ հայտարարել խմելու ջրի ներքին հինցանցի վերանորոգման աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Ստանալ համապատասխան գումարը, փոխանցել գումարն ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները: Այժմ համայնքի բնակիչներից 20 տուն չեն կարողանում օգտվել խմելու ջրի ոռոգման ցանցից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում բնակիչները խմելու ջրի խնդիր չեն ունենա: Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 50000 դրամ

Կապիտալ ծախսեր՝ 100000 դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 150000 դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

Խնկոյան համայնքում <<Ներքին ջուր>> կոչվող գետակի գարնանը ձնհալքներից և անձրևներից վարարման և շրջակա տարածքի ճահճացման վտանգը վերացնելու նպատակով կիրականացվի **<<«Ներքին ջուր» կոչվող գետակի հունի մաքրման>>** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ «Ներքին ջուր» կոչվող գետակի հունի մաքրման ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Սպառնացող ճահճացման վտանգի վերացում:

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Շինարարական տեխնիկայի ապահովվում:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Հունի մքարման աշխատանքի կազմակերպում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Խնկոյան համայնքի բոլոր 410 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2019թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Այժմ <<Ներքին ջուր>> գետակը սելաֆների և շրջակա միջավայրի ճահճացման մեծ խնդիր է ներկայացնում: Գետակի հունը մաքրելուց հետո այդ խնդիրը կվերանա: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բնակիչները կարող են մշակել իրենց հողերը ապահովված լինելով սելաֆների առաջացումից և շրջակա միջավայրի ճահճացումից:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 50000 դրամ

Կապիտալ ծախսեր՝ 120000 դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 170000 դրամ:

4. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Այլ աղբյուրներից,
- Դոնոր կազմակերպություններից

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

«Միջհամայնքային ճանապարհների հարթեցման աշխատանքներ»

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խնկոյան համայնքում տրանսպորտի բոլոր միջոցների բավարար երթևեկության պայմաններ բոլոր եղանակների համար ապահովվել:						
Ծրագրի անմիջական նպատակ	Տրանսպորտային բոլոր միջոցների բավարար երթևեկության ապահովումը						
	Ցուցանիշներ Եկամտի աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1500.0 հազար դրամ	300.0 հազար դրամ	300.0 հազար դրամ	300.0 հազար դրամ	300.0 հազար դրամ	300.0 հազար դրամ
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Հարթեցված միջհամայնքային ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		500.0 հազար դրամ	100.0 հազար դրամ	100.0 հազար դրամ	100.0 հազար դրամ	100.0 հազար դրամ	100.0 հազար դրամ
	2. Միջհամայնքային ճանապարհների խճաքարերի և կավի զանգվածի լցում և հարթեցում						
	Ցուցանիշներ դրամ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2016	2017	2016	2017
		1մլն դրամ	200.0 հազար դրամ	200.0 հազար դրամ	200.0 հազար դրամ	200.0 հազար դրամ	200.0 հազար դրամ
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ. 1.1. Ձեռք բերել անհրաժեշտ քանակի խիճ և կավի զանգված: 1.2. Ձեռք բերել անհրաժեշտ քանակի դիզ. վառելանյութ: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ. 2.1. Ապահովվել անհրաժեշտ շինարարական տեխնիկայի ծառայություն: 2.2. Ճանապարհահարթեցման աշխատանքների կազմակերպում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1500000 դրամ՝						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Խնկոյան համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Խնկոյան համայնքի միջհամայնքային ճանապարհները դարձնել անցանելի բոլոր տրանսպորտային միջոցների համար: Այժմ համայնքի միջհամայնքային ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում: Համայնքի բնակիչները ոչ միշտ են կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

«Եկեղեցու վերակառուցում»

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խնկոյան համայնքում կազմակերպե լ եկեղեցու ավերակների վերականգնման աշխատանքները:						
Ծրագրի անմիջական նպատակ	Խնկոյան համայնքում հոգևոր և մշակութային արժեքները զարգացնելը						
	Ցուցանիշներ աճ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		11 մլն դրամ	2200.0 հազար դրամ	2200.0 հազար դրամ	2200.0 հազար դրամ	2200.0 հազար դրամ	2200.0 հազար դրամ
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Եկեղեցու ավերակների վերականգնում:						
	Ցուցանիշներ դրամ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		11 մլն դրամ	2200.0 հազար դրամ	2200.0 հազար դրամ	2200.0 հազար դրամ	2200.0 հազար դրամ	2200.0 հազար դրամ
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ. 1.1. Ֆինանսական հանգանակության կազմակերպում և դոնոր կազմակերպությունների ներգրավում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ. 2.1. Շինարարական կազմակերպության ընտրում: 2.2. Շինթույլտվության տրամադրում: 2.3. Շինարարական աշխատանքների վերահսկում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1մլն դրամ Կապիտալծախսեր՝ 10 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 11 մլն դրամ:						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Խնկոյան համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներկայումս համայնքում եկեղեցի չկա: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կստանան հոգևոր բավարարվածություն:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3

«Խմելու ջրի ներքին հին ցանցի վերանորոգում»

(Ծրագրիանվանում)

Գարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	համայնքի բնակիչներին որակյալ խմելու ջրի ապահովվումը:						
Ծրագրի անմիջական նպատակ	Խնկոյան համայնքում որակյալ և մշտական խմելու ջրի ապահովումը						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		150.0 հազար դրամ	30.0 հազար դրամ	30.0 հազար դրամ	30.0 հազար դրամ	30.0 հազար դրամ	30.0 հազար դրամ
Ծրագրիմիջանկյալ արդյունքներ	1. Խնկոյան համայնքում որակյալ և մշտական խմելու ջրի ապահովում						
	Ցուցանիշներ դրամ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1	5	7	15	25	40
	2. 3 կմ խմելու ջրի խողովակաշարի քաշում						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		3 կմ	600 մ	600 մ	600 մ	600 մ	600 մ
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Մետաղապլաստյա խողովակների և կցոնների ձեռք բերում: 1.2. Հողային աշխատանքների իրականացում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ. 2.1. Հին ցանցի ապամոնտաժում: 2.2. Խողովակաշրի մոնտաժում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 50000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 100000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 150000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Խնկոյան համայնքի 20 ընտանիքներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրիհամառոտ նկարագրություն	Այժմ համայնքի բնակիչներից 20 տուն չեն կարողանում օգտվել խմելու ջրի ոռոգման ցանցից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում բնակիչները խմելու ջրի խնդիր չեն ունենա:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 4

<<«Ներքին ջուր» կոչվող գետակի հունի մաքրման>>

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	«Ներքին ջուր» կոչվող գետակի հունի մաքրման ապահովումը						
Ծրագրի անմիջական նպատակ	Խնկոյան համայնքում <<Ներքին ջուր>> կոչվող գետակի գարնանը ձնհալքներից և անձրևներից վարարման և շրջակա տարածքի ճահճացման վտանգը վերացնելը:						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		170.0 հազար դրամ	34000 դրամ	34000 դրամ	34000 դրամ	34000 դրամ	34000 դրամ
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Սպառնացող ճահճացման վտանգի վերացում:						
	Ցուցանիշներ դրամ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		170.0 հազար դրամ	34000 դրամ	34000 դրամ	34000 դրամ	34000 դրամ	34000 դրամ
	2. 2 կմ գետի հունի մաքրում:						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2 կմ	400 մ	400 մ	400 մ	400 մ	400 մ
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Շինարարական տեխնիկայի ապահովվում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ. 2.1. Հունի մքարման աշխատանքի կազմակերպում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 50000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 120000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 170000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, տրանսպորտ, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Խնկոյան համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2019թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Այժմ <<Ներքին ջուր>> գետակը սելաֆների և շրջակա միջավայրի ճահճացման մեծ խնդիր է ներկայացնում: Գետակի հունը մաքրելուց հետո այդ խնդիրը կվերանա: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բնակիչները կարող են մշակել իրենց հողերը ապահովված լինելով սելաֆների առաջացումից և շրջակա միջավայրի ճահճացումից:						

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ
06801681